Սա (Պետրոս) եւ բազում ճառս գեղեցիկ յօրինուածով եւ ներբող պանծալի ի ծնունդն փրկչին, եւ յամենօրհնեալ Մայր նորա ի Ս. Աստուածածինն„[1] տեսա՞ծ էր ան-ձամբ կամ կարդացա՞ծ սոյն ճառերն, թէ Օր-պէլեանէն ծանօթ էր իրեն. նոյնպէս Հ. Ալիշան երբ Գովեստն ի Ս. Կոյսն յիշելէն ետքը կ'ըսէ. «եւ քանի մը կտորք ուրիշ ճառից„[2] չենք գիտեր:

Յակոբ Վ. Ակնեցի կը յիշէ Պետրոսի Աւետման վրայ գրած ներբողեան մը սա խօս-քերով. «Պետրոս Սիւնեաց եպիսկոպոսն զյա-տուկ իմն ներբողեան յօրինեալ է վասն պա-տուոյ աւուրն աւետման.„[3] թէ այսու նո՞ր գրութիւն մը թէ «Գովեստն ի Ս. Կոյսն„ կ'ուզէ յիշեցնել, նոյնպէս չենք գիտեր. բայց յամե-նայն դէպս նշանակալից պիտի ըլլայ եթէ այսու Ձեռագրի մը մէջ սոյն ճառին «Աւետման„ խորագիր մ'ակնարկէ:

(Մնացեալը գալ անգամ) * Ն. Ա.

ՔՆՆՈՒԹԻՒՆ ԵՒ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԻՒՆ

# ԵԶՆԿԱՅ ՆՈՐԱԳԻՒՏ ՁԵՌԱԳՐԻՆ

Կազմեցին

Գ. Տ. ՄԿՐՏՉԵԱՆ եւ Հ. Յ. ԱՃԱՌԵԱՆ

## Բ.

## ՀԱՆԳԱՄԱՆՔ ՀԱՄԵՄԱՏՈՒԹԵԱՆ ՁԵՌԱԳՐԻՆ ԸՆԴ ՏՊԱԳՐԻՆ

Եզնկայ ձեռագիրը տպագրին հետ հա-մեմատելու ժամանակ գործածած ենք Վենետիկի ՌՄՀԵ թուականի տպագրութիւնը. այս թուա-կանով Եզնկայ քանի մը տպագրութիւններ ելած են Վենետիկի Միաբանութեան տպարանէն՝ տարբեր տարբեր տարիներ, որոնց իւրաքանչիւրը բոլորովին տարբեր տպագրութիւն է. բայց որովհետեւ հրատարակիչները աշխատած են այդ զանազան տպագրութիւնները բոլորովին նոյն ձեւով դուրս հանել, ուստի անկարելի էր մեզ որեւիցէ նշանով որոշել թէ ո՛ր տպա-գրութիւնն է մեր ունեցածն ու գործածածը. ուստի կը բաւականանանք միայն ՌՄՀԵ թուականը որոշելով:

Յաջորդ գլխուն մէջ ձեռագիրն եւ յիշեալ տպագրին ունեցած տարբերութիւնները ամենայն ճշախնդրութեամբ եւ ամենայն խղճմտութեամբ նշանակած ենք, առանց բան մը զանց ընելու: Համեմատութեան ժամանակ սակայն ներկայացան խումբ մը այնպիսի տարբերութիւններ, որ ամէն անգամ առանձին առանձին նշանակել աւելորդ ծանրաբեռնութիւն համարելով, բաւականացանք միայն այստեղ ընդհանրապէս յիշելով:

1. Ձեռագրին մէջ գրքերու եւ գլուխներու կամ հատուածներու բաժանում չկայ. այս բանը պարզապէս հրատարակիչներու կողմէն է աւելցուած, ինչպէս կը յիշուի տպագրին սկիզբը գրուած համառօտ «զեկուցում„ին մէջ. «եւ զանյօդաւոր զմիահետ գրչագիրն արարաք ի գիրս եւ ի գլուխս„:

2. Ձեռագրին մէջ առհասարակ Ե եւ Է տառերուն տարբերութիւնը պարզ չէ. ուստի շատ տեղ Ե-ով կարծուածը կրնայ Է-ով ալ գրուած համարուիլ եւ ընդհակառակը. այս մթութիւնը ամէն անգամ նշանակել աւելորդ համարեցինք:

3. Ձեռագրական տարբերութեանց մէջ ի նկատի չենք առած «եւ„ շաղկապին գրու-թեան եղանակը, թէ արդեօք միատառ «և„ ձեւո՞վ է գրուած, թէ երկտառ եւ.

4. Յաճախ կամ գրեթէ միշտ բառերն անանջատ գրուած են ձեռագրին մէջ, այս կէտն եւս նշանակել ամէն անգամ՝ աւելորդ կարծեցինք:

5. Կէտադրութիւնը, ինչպէս յայտնի է, ձեռագրաց մէջ որոշ կանոնի մը կամ դրու-թեան մը տակ չի մտներ առհասարակ. այսպէս է եւ մեր ձեռագրին մէջ. ուստի այս եւս նշանակել զանց ըրինք:

6. Ձեռագրին մէջ յ տառի յապաւումներ շատ կան. ինչպ. հյել, փոխանակ ըսելու «հայել„. կամ հյելոյ, փոխանակ գրելու «հայելոյ„. այս պակասները նշանակած չենք:

7. Չենք նշանակած նոյնպէս աւելորդ անգիր ը-երու կիրառութիւնը, այսպէս մշտընջե-նաւոր, փոխանակ «մշտնջենաւոր„:

8. Չենք նշանակած պատիւները, որ քիչ անգամ գործածուած են ձեռագրիս մէջ:

9. Ձեռագրիս մէջ օ ձայնին տեղ առ-հասարակ աւ է գրուած. այս տարբերութիւնը նշանակած չենք. բայց ուր որ օ պատահի փոխանակ աւ գրութեան, նշանակած ենք:

[1] Պատմ. Հայոց Բ. էջ 222:
[2] Հայապատում. Ա. 68:
[3] Վէմ հաւատոյ. Կ.Պ. 1733, էջ 640:

digitised by A.R.A.R.@

10. Տեղ տեղ մէկ մէկ տառեր քերուած կամ ջնջուած են. իսկ քերուածները կամ փոխանակուած են նորերով (սրբագրուած) եւ կամ այնպէս պակաս թողուած են. առաջին պարագային նշանակած ենք ուղղուած ձեւը՝ փակագծի մէջ յայտնելով թէ քերուած կամ սրբագրուած է բառը. իսկ երկրորդ պարագային համառօտութեան համար՝ քերուած եւ բաց թողուած տառերու տեղ դրած ենք ≡ նշանը։

11. Ձեռագրին մէջ "ութիւն" վերջացող բառերուն եւ անոնց այլեւայլ հոլովաձեւերուն համառօտագրութիւնները պարզ չեն. ինչպէս յայտնի է. ուրիշ տեղ սովորական դարձած համառօտագրութիւններն են ութի, ութե = ութիւն, ութեան, բայց ութին, ութեն = ութիւնն, ութեանն. կամ նաեւ պարզապէս ուի են։ Բայց մեր ձեռագրին մէջ "թիւն" համառօտուած է թէ՛ թի, թէ թն եւ թէ թին ձեւերով. այնպէս որ կասկածելի է միշտ թէ թին կամ թն գրուած բառը արդեօք թի՞ւն պէտք է կարդալ թէ թիւնն։ Այս պատճառով աշխատեցանք ամէն կասկածելի կէտ նշանակել. մեծութի, մեծութիւնն, մեծութնն. ձեւերը ուրիշ բան չեն կրնար կարդացուիլ, բայց թէ մեծութիւն, մեծութիւնն. ուստի այս ձեւերը նշանակել աւելորդ էր. նոյնպէս կարաւտութնս, բնութինքն պիտի կարդացուէին միմիայն կարօտութիւնս, բնութիւնքն, ուստի անոնք եւս չնշանակեցինք. բայց երբ տպագիրը (էջ 20, տող 2) ունէր ամուսնութիւն, մինչդեռ ձեռագիրը կը գրէր ամուսնութն, նշանակեցինք, որովհետեւ այս վերջի բառը կրնար նաեւ ամուսնութիւնն կարդացուիլ։

12. Ձեռագրական տարբերութեանց մէջ ընթերցողը երբեմն պիտի գտնէ ձեւեր, որոնք տպագրին հետ բոլորովին նոյն են. այս պարագային սխալմունք մը ենթադրելու չէ. որովհետեւ յիշեալ ձեւը դիտմամբ է գրուած՝ չեշտելու համար թէ իրօք ձեռագրին մէջ ալ այդ ձեւն ունի բառը. այս կը պատահի այն ժամանակ, երբ նշանակուած բառը օր եւ իցէ պատճառով կրնայ կասկածանքի ենթարկուիլ, կամ եթէ բառին հետ համեմատելի ձեւ մը կը գտնուի նոյն էջին վրայ։

---

## Գ.

## ՁԵՌԱԳՐԱԿԱՆ ՏԱՐԲԵՐՈՒԹԻՒՆՔ

| էջ | տող | |
|---|---|---|
| 5 | 1—3 | Երանելոյն եզնկա վարդապետի (այսպէս կարմրագրով. յետոյ սրբագրուած աւելի մանր եւ սեւ տառերով այսպէս. Երանելոյն եզնակ վարդապետին կողբացւոյ). |
| | 4—6 | չիք գիրք առաջին եղծ աղանդոց հեթանոսացն. |
| | 7 | զանէրեւոյթէն. նախապէս գրուած զանէրեւութէն. |
| | 10 | յիստակել. |
| 6 | 3 | զբբաւքն. |
| | 7 | անքննին. |
| | 8 | ընծայութն. գծուած վանկը մանր տառով լուսանցքի մէջ. |
| | 10 | էութինն. |
| | 25 | ինչ̈ (երկրորդ չ-ն ջնջման նշանով). |
| 7 | 5 | չիք ամենայն. |
| | 8 | աւեալ է. |
| | 10 | երեւելեաց. |
| | 14 | չիք ժամանեցուցանել. |
| | 1 | չիք անպհականեալ. |
| | 5 | ընքեան. |
| | 11—12 | առ յամենայնի. |
| | 22 | նախապէս անխախուտ. յետոյ ս քերուած = անխախու. |
| | 24 | որ. |
| 9 | 1 | բղմունքն. |
| | 6 | աղքի րն է̈ է (է ջնջման նշանով). |
| | 6 | որ զամենայն (որ բառը տողամիջում նոյն գրչից). |
| | 8 | չիք այս ինքն. |
| | 15 | գեղեցկութեան (տողամիջում նոյն գրչից ն = գեղեցկութեանն). |
| | 19—20 | ի բարդյարարչէ. |
| | 22 | հերձուածողաց. |
| | 23 | բարս |
| | 24 | հիւղն. |
| 10 | 1 | ի բարերար (ար-ը լուսանցքում). |
| | 8 | ընդերրին. |
| | 12, 15 | խառնուածո |
| 11 | 6 | խառնուածովք. |
| | 14 | փոփոխմամբ (բ տողամիջում, նոյն գրչից). |
| | 15 | եթէ է (է տողամիջում, նոյն գրչից). |
| 12 | 14 | չիք եւ. |
| | 15 | խոնարհագունաւք. |
| | 20 | վկանն (երկրորդ ն տողամիջում). |
| | 24 | ըմշտնջենաւորք (ս քերուած — յմշտնջենաւորք). |
| | 26 | առնուցին, նոյն գրչից ուղղուած առնուցուն. |
| 13 | 25 | պհոգոց. |
| | 26 | անշնչոց. |
| 14 | 1 | բարեաւք (տողամիջում մանրատառ ուղղուած իօք — բարիօք). |
| | 28 | զի մերթ. |
| 15 | 7 | պաշտաւնէիցն. |
| | 10 | զիս զնոսա (տողամիջում եւ, ի — զիս եւ զամենայն ախտ). |
| | 16 | ամողջամառ. |
| | 19 | աւրինակ. |
| 16 | 5 | զանուշութինն. |
| | 6 | ժանդահոտութիւն. |
| | 12 | եւ անպատուէն (եւ տողամիջում). |
| | 21 | նահանջէր (տողամիջում ը — նըհանջէր). |
| | 22 | զամենեսեան. |

digitised by A.R.A.R.@

| էջ | տող | |
|---|---|---|
| 16 | 24 | անարգանացն. |
| 17 | 8 | զկենդանութիւն. |
| | 11 | զխոշակն (տողամիջում ր — զխորշակն). |
| | 14, 22 | երիւարաց. |
| | 16 | չիք եւ. |
| | 17 | զաւրութ (տողամիջում ն = զաւրութն). |
| | 25 | այլթաքեն. |
| 18 | 3 | լուսանցքում նոյն գրչից իսկ. |
| | 10—11 | ի Հանդէպ (ի տողամիջում). |
| | 14 | բնաւ ոլանան (տողամիջում մանր տառով ս — բնաւս ոլանան). |
| | 18 | ընդ Հիւսոյ. |
| | 18 | չէ ինչ (ինչ լուսանցքում). |
| | 22 | անփիւնս. |
| | 26 | Հարցուածս բառը քերուածքով, Հ տողամիջում՝ առաջին գրչից). |
| 19 | 22 | զցասումն. |
| | 24 | ընդերքին. |
| | 26 | որում. |
| 20 | 2 | ամուսնութն. |
| | 4 | որդոց. |
| | 9—10 | պիտանիզքնաւ = պիտոյ է զընաւ. չիք մեզ. |
| | 10 | թուել. |
| | 14 | զաւրութն. |
| | 17—18 | արարիչ ասել (ասել լուսանցքում). |
| 21 | 1 | անընդանի. |
| | 4 | Հիւղն. |
| | 4 | անուանէր (առաջին գրչից ս քերուած, տողամիջում ս — անուն էր). |
| | 6 | ամենարուեստ. |
| | 11 | ուցանելով. |
| | 13 | արուեստագիտութենն. |
| | 15 | վարեալ (ա ընջման նշանով = վարել). |
| 22 | 1 | կացուցանէ. |
| | 6 | Հիւղն անուանեն. |
| | 10 | ապառուած. |
| | 13 | ընդդիմակացն, լուսանցքում ացն — ընդդիմակացացն. |
| | 18 | մտադիւրութն. |
| | 23 | իրաւանք. |
| 23 | 1 | լուսանցքում որ, աւելացրած վերևից ւ = ուր. |
| | 4 | ի ներքոյ (ի տողի վրայ). |
| | 5 | ի Հիւղն. |
| | 8 | ի Հիւղն. |
| | 10, 16 | Հիւղն. նոյնպէս եւ տող 24. |
| | 14 | զբոլոր. |
| | 26 | զերկուսին (տողամիջում ս? = զերկուսինս). |
| 24 | 1 | Հիւղն. |
| | 2 | անարգ (գ քերուած — անարդ). |
| | 6 | չիք ուրեմն. |
| | 7 | յանարգս. |
| | 9 | զՀիւղն. |
| | 11 | ի Հիւղն. |
| | 17 | Հիւղին. |
| | 20 | ամբարշտութեանն. |
| | 21—22 | Հիւղն յանձ էր. |
| | 23—24 | զատիչ. |
| 25 | 1 | որ. |
| | 2-3, 13 | ի ներքոյ. |
| | 4 | զՀիւղեայն. |
| | 11 | ապընջական (տողամիջում ս = ասպընջական). |
| | 18 | զՀիւղն. |
| | 19 | Հիւղ. |
| 26 | 4 | չիք միայն. |

| էջ | տող | |
|---|---|---|
| 26 | 8 | յոչնչէ. |
| | 15 | ոչ եւ քարինք կոչեն. |
| | 18—19 | արուեստն որ ի բնութեանն է. |
| | 19 | արուեստն. |
| | 22 | զարուեստագիտութենն. |
| | 24 | անձնաւորք. |
| | 25 | զարուեստն. |
| | 26 | որ. |
| 27 | 2 | Հիւանն. |
| | 4, 6 | զարուեստն. |
| | 4 | արուեստն. |
| | 6 | յոչնչէ. |
| | 8 | եւ եթ (տողամիջում փոքրատառ է = եւ եթէ). |
| | 14 | նիւթ. |
| | 14 | խնդրեաց. |
| | 16 | ի միւսն. |
| | 17 | մրրախառնն. |
| | 20 | որ. |
| | 25 | Հիւղն. |
| 28 | 1 | անկերպարան. |
| | 3 | լինին (լուսանցքում ից = լինիցին). |
| | 4 | ապանութն. |
| | 5 | չնութն. |
| | 9 | ի ճարտարութենէ (ի տողամիջում). |
| | 12 | անդի. |
| | 12 | զանուանս. |
| | 24 | զանուանումն արուեստին. |
| 29 | 6 | անուանել. |
| | 7 | չիք եւ չար. |
| | 8 | յամառատութե կացեն (տողամիջում մանրատառ ց = կացցեն). |
| | 10 | է Հիւղն. |
| 30 | 7 | արդեաւք. |
| | 12 | չիք ուրեմն. |
| | 13 | չիք զի. |
| 31 | 1 | չարեացն. |
| | 3 | արարուածս. |
| | 4 | նոյնպիսիս յապականութն. |
| | 6 | եթե. |
| | 8 | զՀիւղն. |
| | 9—10 | զընդդրեալն եւ զզգալն. |
| | 10 | չարեացն. |
| | 22 | Հիւղեայն. |
| | 25 | նոյնպիսիս. |
| | 26 | ակարութն. |
| 32 | 6 | զչանագատիչս (լուսանցքում նոյն գրչից չարիսն — զչարիսն բանագատիչս). |
| | 12 | Հիւղայն. |
| | 12—13 | բնութն իցէ եթ (է տողամիջում = եթէ). |
| | 14 | գործուածք. |
| | 15 | ասձեն. |
| | 16 | Հիւղն. |
| | 17 | ի յաւդուածոց. |
| | 19 | ի խառնուածոց Հաստատել. |
| | 20 | Հիւղեայն. |
| | 21 | չէ մարթիյաւդուածոցն. |
| | 24 | յաւդուածոյքն. |
| 33 | 2 | Հիւղն (նոյնպէս եւ տող 4, 5, 6, 9, 12, 15, 20). |
| | 6 | յաւդուածով. |
| | 6 | յաւդուածոյքն. |
| | 8 | զանձնաւորութն. |
| | 9 | մինչեւ. |
| | 11 | յորում չէր նարար (քերուածներով). |

digitised by A.R.A.R.@

| Էջ | տող | |
|---|---|---|
| 33 | 13 | թէ (տողամիջում ե — եթէ). |
| | 14—15 | պարզականքն եւ անարարքն. |
| | 21 | առ աւանդ. |
| | 26 | ընքեան. |
| 34 | 1 | ընդերին եւ անդի. |
| | 5 | ընքեան. |
| | 8 | գհիւղեայն. |
| | 13 | անդի եւ հիւղն. |
| | 15 | բնութեն. |
| | 18 | եւ եթէ. |
| | 19 | եւ յոգիս. |
| | 21 | մարթ (թ ջնջուած եւ ուղղուած տողամիջում գ — մարգ). |
| | 24 | ապանութեն կամ չնութեն. |
| 35 | 9 | բաւանդակ. |
| | 18 | յաւէ. |
| | 21 | յառաջոյն (տողամիջում աջ = յառաջագոյն). |
| | 25 | յոյանութեն. |
| 36 | 7 | զայլոց. |
| | 10 | պահանջեցէ. |
| | 11 | ընդ. |
| | 12 | պահանջէ. |
| | 22 | անիրաւութեն. |
| 37 | 1 | պանկութեն եւ չնութեն. |
| | 6 | սիրելս. |
| | 8 | ամուսնութիւն. |
| | 10 | չիք թէպէտ. |
| | 13 | որդոց. |
| | 14 | նոյն. |
| 38 | 5 | սատացուածս. |
| | 7 | երկուցունց. |
| | 14 | չարութեն. |
| | 15 | երկուցուն. |
| | 17 | յանդպանութեւ յաւրինակէ անդի. |
| 39 | 2 | սիրելոյն. |
| | 9 | եւ միւս. |
| | 11 | չիք գի. |
| 40 | 1 | անձնիշխանութեն եւ ազատութեն. |
| | 4 | ճառանկել. |
| | 12 | անդոյն. |
| 41 | 1 | անձնիշխանութեն. |
| | 6 | կասել (տողամիջում ա — կասեալ). |
| | 25 | պատուել. |
| 42 | 16 | յանառել (յ կիսեղծ) հրամանացն. |
| | 25 | իշխանութեն (ջնջուածով). |
| 43 | 4 | այնպիսոյն. |
| | 5, 13 | իշխանութեն երկուցունց. |
| | 11 | ընտրութեն. |
| | 25 | անդի լինէր ակիսքն. |
| 44 | 1 | անարարիլ. |
| | 4 | գիպեդիպեալ. |
| | 8 | չիք կարէ ոք. |
| | 9 | բնութեն. |
| | 12 | փարգապետութեն. |
| | 14—15 | ի մանգութենէ. |
| | 18 | բնութեբ (տողամիջում ա — բանութեամբ). |
| | 23 | հաշուել. |
| | 24 | որ զմարդն (որ տողամիջում). |
| 45 | 2 | կամեցիս. |
| | 5 | ծչդիւ. |
| | 8 | պատուելո. |
| | 11 | եթէ (է տողի վերայ). |
| | 15 | ընորհել. |
| | 25 | չիք միթէ. |
| 46 | 2 | միւսում. |
| 46 | 7 | զատուցանել. |
| | 17 | թշնամոյն նորա պատ էր. |
| | 18 | չհպեալ (ա ջնջման նշանով եւ ջնջուած). |
| | 26 | պատուերս. |
| 47 | 4 | ի պատուիրելո. |
| | 5 | միաւսակարս (վերջի ս-ն տժգունացրած — միաւսակար). |
| | 7 | նախանձել. |
| | 7 | ըստ (ս ուղղած ն — ընտ — ընդ). |
| | 8 | չգիտեալ (ա ջնջման նշանով). |
| | 10 | ասաս. |
| | 12 | պատուիրանէն. |
| | 13 | մարգուն. |
| | 15 | ի մահարերէ (ի տողամիջում). |
| | 15 | չիք զայն յառաջագրեալ մարդոյն. |
| 48 | 3 | միաս ինչ (ինչ լուսանցքում առաջին գրչից). |
| | 8 | պատուիրանազանցութեանն. |
| | 9 | եթէ (ե տողամիջում) պատուիրանք. |
| | 14 | չիք էր. |
| | 17 | բշկի (ժ տողի վրայ — բժշկի). |
| | 21 | զպատուէրս. |
| | 22 | թշնամւոյն (Կմնո. յաչորդը). |
| | 26 | ի թշնամոյն ձր ի. |
| 49 | 1 | պատուիրանէբշկին (ժ տողամիջում — բժշկին). |
| | 3 | թշնամի. |
| | 5 | ի պատուիրանէն. |
| | 7 | չիք որպէս. |
| | 10 | թէ. |
| | 15 | կամ որպէս թէ. |
| | 20 | որպէս թէ (թէ տողամիջում). |
| | 23—24 | անագորն (այսպէս). |
| | 26 | ակիսքն. |
| 50 | 5 | պատուեալ. |
| | 6 | զընդեց զպատուիրանն. |
| | 17 | չիք է. |
| | 21 | չիք նա. |
| 51 | 18 | իշխանութեն. |
| | 26 | հաստանել ընդենուլ (չիք եւ). |
| 52 | 10 | արարն (ն տողամիջում). |
| | 22 | զատանա (ս տողամիջում — զատանայ). |
| | 26 | յերրանեցոց եւ յասարոց (նրկրորդ ե-ը ջնջուած եւ տողամիջում նորից գրուած). |
| 53 | 2 | զաւրութեն. |
| | 5 | իւրոյն. |
| | 10, 14 | զապատամբ. 13, 18, 20 ապստամբ. |
| | 17 | իշխանութեն. |
| | 21 | ապստամբի. |
| | 24 | չիւրձ. |
| 54 | 3 | ոչ անարար էր. |
| | 4 | չիք ըստ ձեզ. |
| | 7 | անդի. |
| | 11 | թէ չգիտէր. |
| | 13 | ապա թէ ոչ. |
| | 17 | անգիտութեն. |
| | 18 | չիմարութեն. |
| | 25 | յանցանելոց (տողամիջում ուց — յանցուցանելոց). |
| 55 | 9 | ամբարշտացեալ. |
| | 25 | տկարութեն. |
| 56 | 2 | չիք եւ. |
| | 6 | անգամ գի անգամ գի. |
| | 7 | առ յապա. |
| | 9 | ապանեալ էր. |
| | 19 | որ. |
| | 23 | աւգնականութեբ. |

digitised by A.R.A.R.@

| Էջ | տող | |
|---|---|---|
| 57 | 14 | պսակել (տողամիջում փոքրատառ ս = պսակեալ). |
| | 15 | Հաստանիցէ. |
| | 17 | բերցեն (տողամիջում առաջին գրչից ի = բերիցեն). |
| | 19 | ոչ ածիցէ. |
| | 20 | ոչ ցանկանայցէ. կործանի. |
| | 21 | անդի. |
| | 22 | թշնամանի եւ տանջի. |
| | 24 | կրէ. |
| 58 | 4 | զպատուիրանսն. |
| | 6 | բանաարկուին մարդ չիցի. |
| | 9 | պատիժս. |
| | 10 | ընկերին. |
| | 18 | այնպիսեացն. |
| | 22 | կանխիցեն. |
| | 23 | արկել (տողամիջում մանր ա = արկեալ). |
| | 26 | ի պարտութեն. |
| 59 | 3 | զնոյն լուսանցքում. |
| | 6 | չիք առեմք. |
| | 10 | չիք եւս. |
| | 11 | եթէ. |
| | 23 | որդս. |
| | 25 | իւրով. |
| 60 | 1 | ի դրացն. |
| | 2 | թշնամանեցի (տողամիջում փոքրատառ ս = թշնամանեսցի). |
| | 13 | եթէ թագաւորն. |
| | 20 | մահապարտեալդատաւորաց (տողամիջում նոյն գրչից գ = մահապարտեալ դատաւորաց). |
| | 21 | իւրաքանչիւր. |
| | 25 | որ. |
| 61 | 2 | անօրէնս. |
| | 4 | ցանկութեանն. |
| | 6 | բանն̈ (երկրորդ ն ջնջման նշանով եւ յետոյ գրուած). |
| | 9 | այլուստ. |
| | 13—14 | եթէ չունի որ կոչէ. |
| | 14 | եւ պոռնիկն. |
| | 23 | ընկերին. |
| | 25 | բարս. |
| 62 | 2 | զբարս. |
| | 19 | անդի. |
| | 20 | բնութեն. |
| | 22 | պաշտանութեն. |
| 63 | 7 | երկեւղին. |
| | 17 | որք. |
| | 24 | անդի. |
| | 26 | չիք եւ. |
| 64 | 7 | յաւծապաշտացն. |
| | 11 | բարեկացիքն. |
| | 13 | ընդելական. |
| | 19 | բարոյ. |
| | 20 | բարոյն. |
| 65 | 2 | բարս ծախեալ (վերջին ա-ը ջնջման նշանով եւ գրուած). |
| | 4 | ապաւեալ. |
| | 10 | չիքինչարարիչ. |
| | 12 | զօր. |
| | 19 | տարաբեալ. |
| | 24 | չիք լինի. |
| | 25 | ամուսնոյն. |
| | 26 | այլոց (ն տողամիջում = այլոցն). |
| 66 | 2 | ի բարս. |
| | 5 | Նորա ամենայնին վնասակար. |
| 66 | 6 | զնոցա. |
| | 10 | վարդապետոյն. |
| | 12 | զնոցայն. |
| | 13 | վնասէր. |
| | 16 | վնասակարութեն. |
| | 18 | ըմբիցէ. |
| | 22 | զմանրապետերն եթէ լոյկ որ ուտիցէ. |
| | 25 | քնահատացն (ն գրուած = քնահատաց). |
| 67 | 5, 7 | ըմբիցէ. |
| | 6 | զսերմն. |
| | 7 | չիք որ. |
| | 17 | դեղս. |
| | 24 | որ. |
| | 25 | անդի. |
| 68 | 5 | ուրիշաց. |
| | 6 | պատասխանոյ. |
| | 7 | ընտանիս. |
| | 9—10 | ածել (տողամիջում փոքր ա = ածեալ). |
| | 11, 14 | անուանս. |
| | 15 | ընդելութեն. |
| | 18 | անցանելոյ. |
| | 23 | տուաճնոյ. |
| | 25 | ընդելութենս. |
| 69 | 1, 9 | իբրեւ. |
| | 2 | ընդելութե. |
| | 3 | միւսոյն. |
| | 11 | եւ այլս զարքս (չիք որ). |
| | 15 | եւ այլոց (չիք որ). |
| | 19 | յընդելութեն. |
| | 25 | ընդելութեն. |
| | 25—26 | եւ թէ. |
| 70 | 18 | քանուզ (= քան. զո). |
| 71 | 2 | արարածս. |
| | 20 | զմահուան. |
| | 24 | պատուիրանաւն. |
| 72 | 8 | բնութեն. |
| | 11 | ի պատուիրանին. |
| | 12 | յոշնչէն. |
| 73 | 2 | ենօք. |
| | 3 | Հաս ակաց (այսպէս). |
| | 4 | յարութեն. |
| | 9 | զյարութենն. |
| | 23 | իբրեւ. |
| 74 | 2 | չառայցէ. |
| | 7 | պատուիրեալ. |
| | 10 | չիք աւուր. |
| | 16 | պատուիրանին. |
| | 20 | զպատուիրանաւն. |
| | 21 | արարեալ (վերջին ա-ը մանր տառով տողամիջում). |
| | 24 | թէ. |
| 75 | 1 | բնութե. |
| | 7 | մահուամբ. |
| | 16 | զընդեցեալ. |
| | 18 | պատճառ (ա տողամիջում). |
| | 19 | իմաստուն (տողամիջում ն = իմաստունն). |
| | 23 | յանեղծութեն. |
| 76 | 6 | պատուիրանին. |
| | 26 | ահա. |
| 77 | 3 | ոգորել (ոգ տողամիջում). |
| | 21 | կանխագէր (տողամիջում ուղղուած եա = կանխագէտ էր). |
| 78 | 4 | Էրդին (տողամիջում ո = է որդին). |
| | 12 | որդոյն. |
| | 14 | ասուբս. |

digitised by A.R.A.R.@

| Էջ | տող | |
|---|---|---|
| 78 | 19 | ընդհանուր. |
| | 22 | ընդունեցի. |
| 79 | 2 | անգամ. |
| | 8 | զպատուիրանան (= զպատուիրանաւն). |
| | 10 | զպատճառաւն (ան տողամիջում). |
| 80 | 16, 18 | ծնաւղաց. |
| 81 | 1—2 | պակաս իցէ կամ յաւել իցէ. |
| | 3 | ի մարմնին. |
| | 4 | յըմբռնել. |
| | 7 | ի սրտի (ր տողամիջում). |
| | 11 | սկիզբն. |
| | 13 | յափշտակութիւնք. |
| | 14 | գեւղից. |
| 82 | 4 | ըմբռնէ. |
| | 14 | անմեղացն. |
| | 17—18 | որպէս գեղ առէր. որդի անպարտնիկ իմ էղ (= որպէս զերարկեալ...). |
| | 20 | առաքինեալքն. |
| 83 | 11 | թէ արդարն. |
| | 12 | ամբարիշտն. |
| | 22 | թողութին. |
| 84 | 2 | ի զատապարտութին իւր ոգոց. |
| | 5 | յարդարահատութին. |
| | 10 | անեղութիւն. |
| | 18 | առաքինեալք (ք տողամիջում). |
| | 25 | զայն առէրն իսկ. |
| 85 | 2, 5 | Հոգով. |
| | 7 | Հոգւոյն. |
| | 9 | առաքեալքն եթէ ոչ (չիք մինչ). |
| | 10 | իշխանութիւն. |
| | 13 | իշխանութին. |
| 86 | 9 | Հոգւոց. |
| | 12 | ամէն. |
| | 16 | անասնեանք (անս լուսանցքում). |
| | 19 | ընկերանք. |
| 87 | 1 | ոգոց. |
| | 4 | աւգնականութին. |
| | 7 | իշխանութին. |
| | 11 | անդի. |
| | 15 | զյովդն. |
| | 20 | թուլացեալ. |
| | 24 | զանձնիշխանութին երկուցուն. |
| | 26 | երկուցունց. |
| 88 | 11 | անդի. |
| | 15 | սաղմոսիցն. |
| | 16 | Հոգւոյն. |
| 89 | 2 | յափշտակեսցէ. |
| | 8 | իշխանութին. |
| | 9 | զաւրութին. |
| | 12 | առնիցեն. |
| | 13 | ըմբռնիցեն. |
| | 18 | մեղանչիցէ (ն տողամիջում). |
| | 26 | զգիրս (գիրս լուսանցքում). |
| 90 | 2 | թէ. |
| | 4 | նշանաց. |
| | 10 | թէ եւ Հրեշտակք. |
| | 17 | ոգի եւ Հոգւոյ (ղ տողամիջում). |
| | 18 | երրեակերէն. |
| 91 | 10 | բնութին. |
| | 12 | ոգոց. |
| | 14 | եթէ. |
| | 16 | եւ մարդիկ խոստովանին, որպէս մարգարէն ասէ, թէ ա՜ [= ամենայն] մարմին խոտ է. ուստի... |
| | 17 | ի Հրոյ խառն (չիք ըստ) ոչ ամուսնութին. |
| | 21 | անուամբ. |
| 91 | 26 | առաքելադրութեանն. |
| 92 | 2 | ի խորանաց (ա տողամիջում). |
| | 8 | սուրբնեալք (ե տողամիջում). |
| | 11 | ոգիք. |
| | 14 | Հրեշտակք. |
| | 18 | եւ նուրբ. |
| | 22 | անուամբքս անուանին. |
| | 23 | այնպիսի անուանս (անուանս ջնջուածներով). |
| | 26 | ընդրութի. |
| 93 | 5 | ծախիչ (Նախապէս ծաղիկ, յետոյ նոյն գրչից ուղղուած). |
| | 7 | Հոգի. |
| | 10 | յաւէժ երկեաց. |
| | 15 | քաղցրութին |
| | 18 | անուանս. |
| 94 | 3 | գիտութին. |
| | 11 | որդւ առ աբրաամ. |
| | 14 | ի լերինն (Նախդիրը տողամիջում). |
| | 18 | զաւառ. |
| | 20 | ի մերձնոյն. |
| | 21 | անձել (տողամիջում ա = անձեալ). |
| | 22 | Նախընծայեցելո (տողամիջում ա = Նախընծայեցելոյ) ասեն. |
| 95 | 1 | մանէի. |
| | 5 | չիք եւ. |
| | 8 | թախծելոց ի Հարուածոցն. |
| | 14 | մարդկակերպարան (վերջին ա-ը լուսանցքում). |
| | 18 | ցուցանէր. |
| | 22 | ցանկալի. |
| 96 | 2 | մարմնաւորի (չիք է). |
| | 5—6 | աննաւորամարմինք (Տմմտ. Հայկ. բառ.). |
| | 7—8 | երկնաւորաւորաց են. |
| | 9 | եւ տողամիջում. |
| | 13 | զՀրեշտակաց. |
| | 20 | ոչ աստի. |
| | 23 | չիք զի. |
| 97 | 2 | քան զկէան Նորագոյն (չիք զծանուցանն). |
| | 7 | Համբարուաց ծնունդք են եւ չիք զոն). |
| | 14 | կէսք. |
| | 21 | անուանք. |
| | 22 | Համբարեաց. |
| | 26 | կերպարանացն (ան տողամիջում). |
| 98 | 2 | գեւղք. |
| | 10 | զառակութի (տողամիջում փոքրատառ ա = զառակութիւն). |
| | 11 | զյուշկապարկաց. |
| | 15 | ի բարեկոնի. |
| | 16 | անուանք. |
| | 21 | բարեկոնի. |
| 99 | 3 | ինչ (ն տողամիջում). |
| | 4 | իմեք. |
| | 6 | չիք առ. |
| | 9, 11, 13 | կեցէ. |
| | 10 | չիք եւ. |
| | 16 | չիք զոր արտաքնոյն կոչեն. |
| | 22 | գեաւղ. |
| 100 | 3 | եթէ. |
| | 14 | արդեաւք. |
| | 14 | անմարմինք (ի տողամիջում). |
| | 16 | եթէ. |
| | 18 | անուանեն. |
| 101 | 1 | ծնանիլ. |
| | 7 | ակարութին. |
| | 15 | սկիզբն. |

digitised by A.R.A.R.@

| Էջ | տող | |
|---|---|---|
| 101 | 16 | սկսբնաւորացն. |
| | 19 | զօրոց. |
| | 25 | ոգովք վասն պատուիրանազանցութեանն |
| 102 | 5 | թուով. |
| | 11 | որ. |
| | 22 | քան (ա-ը փոքրատառ տողամիջում). |
| | 24 | մարդու չէ հնար. |
| 103 | 1 | նահանգ. |
| | 11 | անխաւսուն (տողամիջում փոքր ն — անխաւսունն). |
| | 18 | բնութիւն. |
| | 26 | եթէովպացոց. |
| 104 | 3 | անգի. |
| | 4 | այնւ (= այնու). |
| | 5 | եթովպացոց (տողամիջում ե = եթեովպացոց). |
| | 12, 14 | չիք եւ. |
| | 15 | մանր մանր (երկրորդը լուսանցքում փոքրատառ). |
| | 17 | չիք են. |
| | 19—20 | ի բնակութիւն. |
| | 24 | երկուն. |
| | 24 | ենոք. |
| 105 | 2 | կախարդանաւք (ախ տողամիջում մանրատառ). |
| | 8 | զդայթագղութիւնն. |
| | 16 | ակնկալութիւն. |
| 106 | 5 | ի նահանգի. |
| | 6 | եւ ի (ի տողամիջում). |
| | 11 | ղաւղորդաց. |
| | 12 | կամ լուսանցքում, ա-ը միատամ. |
| 107 | 4 | Ճշմարտութիւն. |
| | 13 | չիք ի վեր այնպէսի վիշապն. |
| | 14 | առաւանելովք այլ (վերջինիս լ-ն տողամիջում հազիւ նշմարելի). |
| | 23 | ըմբռնեալ (= ընչման նշանով = ըմբռնել). |
| 108 | 1 | յաւգնականութիւն. |
| | 11 | առաձինն (ձ դժգունացրած եւ գրուած քերուած ն-ի վրայ). |
| | 17 | առաջնեալ. |
| | 19 | ի սպասաւորութիւն. |
| | 20 | ժառանգելոցն. |
| | 26 | զերկրպագութիւն. |
| 109 | 3 | բամբասել (— տողամիջում մանրատառ ա — = բամբասեալ). |
| | 17 | վէր, տեսցին (այսպէս). |
| | 24 | որք (ր տողամիջում փոքրատառ). |

(Շարունակելի։)

# ՄԱՏԵՆԱԽՕՍԱԿԱՆ

## ՀԱՅԱՊԱՏՈՒՄ

### Հայապատումին առաւելութիւնները։

(Շարունակութիւն։)

Ցեղեկութիւններով լի է նաեւ Մեծարգոյ Հօր Կորեան վրայ գրած յօդուածը։ Յիշելէն ետքը թէ Վիպոն, Լակրոզ եւ Շրէտեր (ուղղագրութիւնքն ըստ Ալիշանի են) գիտունք կորեան մէջ ապրսամ իւղոյն յիշուիլը գիտէին, զայն մեր ունեցած կորեան օրինակաց այս խօսքին մէջ դուրս ինկած կը համարի. "Ի պաշտաման անուշահոտ իւղոյն։„ Ցետոյ վրայ կը բերէ. "Ըսել է թէ բանք պակասին մեր օրինակաց մէջ։ Եւ այս անտարակոյս է, ինչպէս առաջ այլ յիշեցի, թէ աւելի երկար գրած էր Կորիւն այս գործը։„ Այս ըսածը կը հաստատէ ի մէջ այլոց Անանիա Սանահնեցւոյն՝ Ս. Աստուածի մեկնութեան ճառին մէջ գրած այս խօսքովը. "Զգործս չարութեան (Նեստորականաց) ուսցիս ի պատմութենէն Կորեան աշակերտին Մաշթոցի, ի սպառուածին։„ Մովսէս Խորենացւոյն վրայ գրածը բաւական ընդարձակ է, որուն Ե. դարու ըլլալը հաստատել կը ճգնի։ Յառաջ բերած ցուցումները այժմ զանց կ'ընենք ընել, վասն զի յետոյ ընդարձակ պիտի խօսինք այս մատենագրին վրայ։ Եղիշէի եւ Ղազարի Փարպեցւոյն վրայ Հ. Ալիշան շատ գեղեցիկ գրած է, բայց ոչ ստուգութեան՝ այլ ստորագրութեան կողմանէ։ Առաջնոյն համար չ'ընդունիր թէ իւր յիշած Ամատունեաց համանուն եպիսկոպոսին հետ նոյն ըլլայ։

Այս երկու անուանի եղած պատմագիրներով Հայոց Ե. դարու մեծ պատմչաց շարքը կը վերջանայ։ Ասկէ վերջը մինչեւ Թովմաս Արծրունի եւ Ուխտանէս պատմագիրները, բազմութիւն մը փոքր պատմիչներ կը յիշատակէ Մեծ. Հեղինակը, որոնց վրայ, ի բաց առնելով քանի մը հատը, համառօտիւ միայն կը խօսի։ Ուխտանէս պատմագրին անունը աւելի յունարէնէ ծագած՝ քան հայերէն ուխտ բառէն յառաջ եկած կը համարի եւ նոյն անձին երկրորդ ու երրորդ Գրոց կորուստը անհաւան անձի մը ձեռքով եղած կը կարծէ։ Ուխտանէսէն ետքը աւելի երկար կը խօսի Յովհաննէս Սարկաւագ վարդապետին վրայ։ Զարմանալի կերպով այն վառ ոգւով չի խօսիր Շնորհալւոյն եւ Լամբրոնացւոյն վրայ, ինչպէս իւր ուրիշ գրուածոց մէջ։ Անցնելով Սամուէլ Անեցւոյ՝ կը ցրէ այն կարծիքը թէ այս անձը Սարկաւագ Վարդապետին ժամանակակից եւ աշակերտ եղած ըլլայ. "Զի ինքն զինքն Գէորգ Վարդապետի մի աշակերտ կ'անուանէ. նոյնպէս իր գործը Գրիգոր Մեծ Վկայասէրին (զոր միշտ Գրիգորիս կ'անուանէ) խնդրով գրելն եւ նուիրելը կը ծանուցանէ։„ Համառօտ ընելու համար կ'ըսենք, թէ Հ. Ալիշան Ժ. դարէն վերջը գրող պատմագրաց վրայ շատ կոկիկ կը խօսի, գեղեցիկ ծանօթութիւններ եւ երբեմն նորութիւններ ալ